

2015թ-ին իրականացված այցերի եւ Լոռու մարզպետարանում կայացած հանդիպումների վերաբերյալ

Լոռու մարզպետարանում ներկայացվեց մշակութային ժառանգության զարգացման «CHOICE» միջազգային նախագիծը

09.10.2015



Հոկտեմբերի 8-ին «Միլենիում» հիմնադրամը մշակութային ժառանգության զարգացման «CHOICE» միջազգային նախագծի ներկայացման նպատակով Լոռու մարզպետարանում հանդիպում էր կազմակերպել Լոռու մարզպետարանի աշխատակազմի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերից ժամանած շահագրգիռ կառույցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և լրատվամիջոցների մասնակցությամբ:

Նշենք, որ երկամյա ծրագիրը իրականացվում է Եվրամիության աջակցությամբ և ուղղված է մշակութային ժառանգության պահպանությանն ու վերափմաստավորմանը:

Տես ավելին՝ <http://lori.mtaes.am/news/item/2015/10/09/news2/>

**Դմիտրով և Ստեփանավան քաղաքների միջև համաձայնագիր տորագրվեց.
Լոռու մարզպետի գլխավորած պատվիրակության այցը Դմիտրով**

Լոռու մարզի պատվիրակությունը, ՌԴ պետդումայի հրավերով, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորությամբ մասնակցում էր սեպտեմբերի 24-25-ը Դմիտրով քաղաքում անցկացված քաղաքապետարանների միջազգային տնտեսական ֆորումին:

Ֆորումի նպատակը, որին մասնակցում էին 28 երկրների 900 պատվիրակություններ, փորձի փոխանակումն էր համայնքների միջև՝ առկա խնդիրներն առավել արդյունավետորեն լուծելու նպատակով, նորարական գաղափարների քննարկումը, համագործակցային նոր կապերի ստեղծումը:

Այցի շրջանակներում Դմիտրով և Ստեփանավան քաղաքների միջև սեպտեմբերի 24-ին բարեկամական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագիր տորագրվեց:

Տես ավելին՝ <http://lori.mtaes.am/news/item/2015/09/29/news/>

Ալավերդիում կայացավ տուրիզմի գրասենյակի բացումը. Լոռու մարզի և Պրովանս Ալպեր Լազուրե Ափ ռեգիոնի միջև ստորագրվեց 2015-2017թ.թ. համագործակցության համաձայնագիրը

Ալավերդի քաղաքում տուրիզմի գրասենյակի բացման արարողությանը մասնակցելու և Լոռու մարզի հետ համագործակցության նոր համաձայնագիր կնքելու նպատակով սեպտեմբերի 21-23-ը Լոռու մարզում էր Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս Ալպեր Լազուրե Ափի (Պրովանս Ալպ Կոտ դ'Ազուր - ՊԱԿԱ) ռեգիոնալ խորհրդի նախագահի 1-ին տեղակալ պարոն Պատրիկ Ալմանդի ղեկավարած պատվիրակությունը:

Լոռու մարզի եւ Պրովանս Ալպեր Լազուրե Ափ ռեգիոնի գործակցության շրջանակները ներառում են տուրիզմի, գյուղատնտեսության և ֆրանկոֆոնիայի զարգացման ոլորտները: Նախատեսվում է վերոնշյալ շրջանակների ընդլայնում:

Տես ավելին՝ <http://lori.mtaes.am/news/item/2015/09/23/news/>

Նախադպրոցական կրթության կենտրոնների հիմնում Ջրաշեն և Լեռնավան համայնքներում

09.07.2015





Լոռու մարզի Ջրաշեն և Լեռնավան համայնքներում «Սեյվ դը չիլդրեն» միջազգային կազմակերպության ֆինանսական աջակցությամբ և նշյալ համայնքների ներդրմամբ հիմնվեցին նախադպրոցական կրթության կենտրոններ: Նախաձեռնությունը իրագործվեց Լոռու մարզպետարանի հետ համագործակցության արդյունքում:

«Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության-2» ծրագրի շրջանակներում Ջրաշենի և Լեռնավանի դպրոցների մասնաշենքերում նորոգվել ու կահավորվել են դասասենյակներ, սանհանգույցներ, նախադպրոցական կենտրոնները համալրվել են անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ, դիդակտիկ նյութերով:

Ի դեպ ծրագրի շրջանակներում նախակրթարան բացվեց նաև Շամլուղ համայնքում:

Տես ավելին՝ <http://lori.mtaes.am/news/item/2015/07/09/news3/>

«Դիակոնիա» հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներն ընդլայնվում են

24.06.2015

«Դիակոնիա» հիմնադրամը Լոռու մարզպետարանի հետ համագործակցությամբ սոցիալական աջակցության մի շարք կարևոր ծրագրեր է իրականացնում Լոռու մարզում ու քանի որ այդ ծրագրերի իրականացման արդյունավետությունը գոհացնում է հիմնադրամի պատասխանատուներին, համագործակցությունն օրեցօր ավելի է խորանում, իսկ ծրագրերի թիվը գնալով ավելանում է՝ ընդգրկելով նորանոր համայնքներ: Մարզում իրականացվող ծրագրերը գտնվում են Լոռու մարզպետ Արթուր

Նալբանդյանի եւ մարզպետարանում ստեղծված վերահսկող հանձնաժողովի ուշադրության կենտրոնում:

Նախաձեռնվել են նաեւ առողջապահական ծրագրեր որոնք եւս կկրեն շարունակական բնույթ. համայնքների առողջապահական հիմնարկներին ըստ հրատապության աջակցություն կցուցաբերվի:

Տես ավելին՝ <http://lori.mtaes.am/news/item/2015/06/24/news/>

Լոռի - ՊԱԿԱ, Լոռի - Ռիոն Ալպ համագործակցությամբ մարզում տուրիզմի զարգացման աշխատանքները շարունակվում են

16.06.2015



Պրովանս Ալպ Կոտ դ'Ազուր ռեգիոնի և Լոռու մարզի, ինչպես նաեւ Ռիոն Ալպ ռեգիոնի եւ Լոռու մարզի միջև համագործակցության շրջանակերում Ֆրանսիական տարածաշրջանների ներկայացուցիչների հերթական այցը նշանավորվեց տուրիզմի զարգացման ուղղությամբ տարվող ինտենսիվ աշխատանքներով:

Ֆրանսիայի Պրովանս Ալպ Կոտ դ'Ազուր (ՊԱԿԱ) և Ռիոն Ալպ ռեգիոնների ներկայացուցիչները Լոռու մարզում էին հունիսի 7-15-ը: ՊԱԿԱ-ից ժամանած CRIPT և Օտ Տեղ դը Պրովանս կազմակերպությունների ներկայացուցիչներին ուղեկցում էին ՊԱԿԱ ռեգիոնալ խորհրդի արտաքին կապերի և համագործակցության պատասխանատու աշխատակիցներ Պոլին Մուլին և Լոռա Կառլոնը:

Տես ավելին՝ <http://lori.mtaes.am/news/item/2015/06/16/news/>

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչները իրականացվող ծրագրերի ընթացքին ծանոթանալու նպատակով Լոռու մարզում էին

12.06.2015



ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ծրագրերի ընթացքին ծանոթանալու և տեղում վերլուծություններ կատարելու նպատակով հունիսի 10 և 11-ին Լոռու մարզում էին հիմնադրամի փոխներկայացուցիչ Ռուդոլֆ Ռժեհակը, «Առողջապահության և սնուցման», «Երեխայի պաշտպանության», «Աղետների ռիսկերի նվազեցման», «Տեղական սոցիալական պլանավորման», «Մոնիտորինգի և գնահատման», «Կրթության» ծրագրերի ղեկավարները:

Հունիսի 10-ին վերջիններս Լոռու մարզպետարանում հանդիպում ունեցան մարզպետ Արթուր Նալբանդյանի, մարզպետի տեղակալ Արսեն Դարբինյանի, մարզպետարանի մի շարք վարչությունների և բաժինների ներկայացուցիչների հետ:

Տես ավելին՝ <http://lori.mtaes.am/news/item/2015/06/12/news/>

Լոռու մարզպետը հյուրընկալեց Ֆրանսիայի հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանին

27.05.2015



Մայիսին 27-ին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը հյուրընկալեց Հայաստանում Ֆրանսիայի հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ժան Ֆրանսուա Շարպանտիեին:

Նշենք, որ սա դեսպանի առաջին ճանաչողական այցն է մարզեր: Վերջինիս հանգամանորեն ներկայացվեցին Լոռու մարզում Ֆրանսիայի ՊԱԿԱ և Ռիոն Ալպ ռեգիոնների հետ համագործակցությամբ իրականացվող ծրագրերը:

Տես ավելին՝ <http://lori.mtaes.am/news/item/2015/05/27/news2/>

Լոռու մարզի և Շվեդիայի Ուփսալա նահանգի միջև համագործակցություն է նախանշվում

25.05.2015




ՀՀ Լոռու մարզի և Շվեդիայի Ուփսալա նահանգի միջև համագործակցության հեռանկարները քննարկելու նպատակով մայիսի 24-25-ին Հայաստան էր այցելել Շվեդիայի Թագավորության Ուփսալայի նահանգապետ Փիթեր Էդգարդտը տիկնոջ՝ Լենա Էդգարդտի հետ:

Մայիսի 25-ին պարոն Փիթեր Էդգարդտին, նրա տիկնոջը և արտաքին քաղաքականության գծով խորհրդական Մարտին Բրոզեկին Լոռու մարզպետարանում ընդունեց մարզպետ Արթուր Նալբանդյանը: Հանդիպմանը ներկա էին նաև Շվեդիայի Թագավորությունում ՀՀ դեսպան Արտակ Ապիտոնյանը, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը, եւ այլք:

Տես ավելին՝ <http://lori.mtaes.am/news/item/2015/05/25/news/>

Ռաֆթինգ՝ Դեբեդ գետում

29.04.2015





-
-
-

Ապրիլի 24-28-ը Լոռու մարզում էին Ֆրանսիայի ՊԱԿԱ ռեգիոնի «Օտ Տեղ դը Պրովանս» տուրիստական հայտնի գործակալության ներկայացուցիչ Դանիել Գերասիմենկոն և ռաֆթինգ մարզաձևի եվրոպայում հայտնի մասնագետներ Պիեռ Դաբուն և Մարկ Անդրեն: Վերջիններս նավարկելով Դեբեդ գետով՝ իրենց վարպետությունը ցուցադրեցին սպորտաձևին անտեղյակ տարածաշրջանի բնակիչներին:

Լոռու մարզի և ՊԱԿԱ ռեգիոնի միջև շուրջ երեք տարի առաջ կնքված համաձայնագրի շրջանակներում հատկապես լուրջ առաջընթաց է գրանցվել տուրիզմի զարգացման ոլորտում, իսկ Ֆրանսիացիների այս համարձակ նախաձեռնությունը դրա լավագույն ապացույցներից մեկն է:

Տես ավելին՝ <http://lori.mtaes.am/news/item/2015/04/29/news2/>

Հավանության է արժանացել Ստավրոպոլի երկրամասի հետ համագործակցության Լոռու մարզի առաջարկը

14.04.2015



«Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունում օրերս տեղի ունեցավ միջտարածաշրջանային համագործակցության հարցերով հայ-ռուսական աշխատանքային խմբի երրորդ նիստը՝ «ՏԿԱԻ նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանի և ՌԴ Տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Ալ. Յիրուսկու համանախագահությամբ: Նիստի աշխատանքներին մասնակցելու նպատակով Հայաստան էին ժամանել պատվիրակություններ ՌԴ տարածաշրջաններից եւ ներկայացուցիչներ ՌԴ գործադիր իշխանությունից: Լոռու մարզից աշխատանքային խմբում ներգրավված էր և նիստին մասնակցում էր Լոռու մարզպետի խորհրդական Լևոն Ասլանյանը:

Աշխատանքային խումբը հավանության է արժանացրել Ստավրոպոլի երկրամասի հետ տարածաշրջանային փոխշահավետ համագործակցություն սկսելու Լոռու մարզի առաջարկը:

Տես ավելին՝ <http://lori.mtaes.am/news/item/2015/04/14/news/>

Կբարեփոխվի բարձրալուտ էլեկտրահաղորդման գծերի համակարգը

15.01.2015



Հունվարի 14-ին Լոռու մարզպետարանում կայացավ էլեկտրահաղորդման համակարգի վերակառուցման հետազոտությունը իրականացնող գերմանական «Ֆիխտներ» ընկերության ներկայացուցիչների հանդիպումը Լոռու մարզպետի տեղակալ Արսեն Դարբինյանի, շահագրգիռ համայնքների ղեկավարների,

մարզպետարանի մասնագետների, բնապահպանական և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Նշենք, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը Համաշխարհային Բանկի օժանդակությամբ ձեռնարկել է «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագիրը, որով նախատեսվում է վերակառուցել նաև 220 կՎ «Լոռի» և 110 կՎ «Թումանյան-1,2» օդային էլեկտրահաղորդման գծերը:

Տես ավելին՝ <http://lori.mtaes.am/news/item/2015/01/15/news1/>